ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2-Ն

«26 » հունվարի 2017 թվական գյուղ Սառնաղբյուր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 41-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և <<Իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ,3-րդ մասի և 5-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 16-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սառնաղբյուրի գյուղական համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 41-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված << 74254.4>>թիվը փոխարինել <74793.3>>թվով
2. 2-րդ ենթակետում նշված <<74254.4>>թիվը փոխարինել <<78520.1>> թվով,
3. որոշման 3-րդ կետի հերթական համարը փոխարինել «4» թվով,
4. որոշման 2-րդ կետից հետո ավելացնել նոր՝ 3-րդ կետ, հետևյալ բովանդակությամբ՝ <<3. Տարեսկզբի ազատ մնացորդը՝ 3726.8 հազար դրամ>>:
5. Որոշմամբ հաստատված հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1/ 1112 տողի <<4464.5>> թվերը փոխարինել <<4466.8>>թվով,
2/1121 տողի <<8382.6>> թվերը փոխարինել <<8919.2>> թվով,
3/2400 տողի <<6166>> թիվը փոխարինել <<7166>> թվով,
4/2900 տողի <<19900>> թիվը փոխարինել <<22626.8 >> թվով,
5/3100 տողի <3829.4>> թվերը փոխարինել <<4368.3>> թվով,

6. Որոշմամբ հաստատված հավելվածի ծախսային մասի վերջին տողից հետո ավելացնել 2 նոր տողեր հետևյալ խմբագրությամբ՝

5112	Շենքերի և շինությունների կառուցում	5112	1000.0	-
5113	Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	2726.8	-

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 1

Ասատրյան Զոհրաբ՝կողմ ----------

Գևորգյան Զոհրաբ՝ կողմ ----------

Դավթյան Եղիկ կողմ ----------

Խաչատրյան Արմեն՝ կողմ ----------

Մադաթյան Ստեփան՝ կողմ ----------

Մելքոնյան Սևադա՝ կողմ ----------

Նաջարյան Արմենակ՝ կողմ ----------

Ներսիսյան Գուրգեն՝ կողմ ----------

Շաբոյան Գևորգ՝ կողմ ----------

ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ՄԱԴԱԹՅԱՆ

«26» հունվարի 2017 թվական
գ.Սառնաղբյուր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3
26 հունվարի 2017թվական

ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի ավագանին

որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի 2017թվականի բյուջեի գործառնական և տնտեսական դասակարգման բաժին 10, խումբ 3, դաս 1-ի հոդված 4729-ով նախատեսված գումարից միանվագ դրամական օգնություն տրամադրել հարազատներին կորցրած անձանց՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝9 Դեմ՝ 0 Չեռնպահ՝0

Ասատրյան Զոհրաբ՝կողմ _____

Գևորգյան Զոհրաբ՝ կողմ _____

Դավթյան Եղիկ՝կողմ _____

Խաչատրյան Արմեն՝ կողմ _____

Մադաթյան Ստեփան՝ կողմ _____

Մելքոնյան Սևադա՝ կողմ _____

Նաջարյան Արմենակ՝ կողմ _____

Ներսիսյան Գուրգեն՝ կողմ _____

Շաբոյան Գևորգ՝ կողմ _____

ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԵՎԱԿ ՄԱԴԱԹՅԱՆ

«26» հունվարի 2017 թվական
գ.Սառնաղբյուր

հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Սառնաղբյուր համայնքի ավագանու
2017թվականի հունվարի26 -ի թիվ 3 որոշման

ՑՈՒՑԱԿ

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	ԳՈՒՄԱՐԸ /ԴՐԱՄ/
1.	ՄԻՄԿԱՐՅԱՆ ԱՆՈՒՇ ԱՐՏԱՎԱԶԴԻ	40000
2.	ԽՈԴԵՐՅԱՆ ԱՆԹԱՌԱՄ ՍԱՐԳՍԻ	40000

Սառնաղբյուր համայնքի ղեկավար՝ Ս.Մադաթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4-Ն

«26 » հունվարի 2017 թվական գյուղ Սառնաղբյուր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի ԹԻՎ 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերի , <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների , <<Իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերության դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի ավագանին՝

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 37-Ն որոշումը<<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սառնաղբյուր գյուղական համայնքի վարչական տարածքում 2017թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 41-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 37-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 8 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 1

Ասատրյան Զոհրաբ՝կողմ ----------
Գևորգյան Զոհրաբ՝ կողմ ----------
Դավթյան Եղիկ ----------
Խաչատրյան Արմեն՝ կողմ ----------
Մադաթյան Ստեփան՝ կողմ ----------
Մելքոնյան Սևադա՝ կողմ ----------
Նաջարյան Արմենակ՝ կողմ ----------
Ներսիսյան Գուրգեն՝ կողմ ----------
Շաբոյան Գևորգ՝ կողմ ----------

ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ՄԱԴԱԹՅԱՆ

«26» հունվարի 2017 թվական
գ.Սառնաղբյուր

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի ՀանրապետությանՇիրակի մարզի
Սառնադբյուր համայնքի ավագանու
2017թվականի հունվարի 26 -ի թիվ 4-Նորոշման

Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

Տեղական տուրքերի դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

1/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **4500/չորս հազար հինգ հարյուր** / դրամ,

2/ սույն կետի «1/» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **9000/ինը հազար**/ դրամ,

բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000/տասնհինգ հազար**/ դրամ,

գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000/տասնհինգ հազար**/ դրամ,

դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **30000/երեսուն հազար**/ դրամ.

- ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

3/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **900/ինը հարյուր**/ դրամ,

4/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **1500/մեկ հազար հինգ հարյուր**/ դրամ.

2. համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **900/ինը հարյուր** /դրամ,

2/ բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի 2-րդ կետի 1/ ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և

դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **1500/մեկ հազար հինգ հարյու** դրամ.

4. համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **200000/երկու հարյուր հազար/ դրամ.**

.

6. համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **60000/վաթսուն հազար** /դրամ.

7. համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **50000/հիսուն հազար**/ դրամ.

8. համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝**1000/ մեկ հազար**/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **10001/տասը հազար մեկ** /դրամ,

գ.50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **13001/տասներեք հազար մեկ**/դրամ

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝**20001/ քսան հազար մեկ** / դրամ

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝**25001/ քսանհինգ հազար մեկ**/ դրամ

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **45001 /քառասունհինգ հազար մեկ**/ դրամ.

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **1500/հազար հինգ հարյուր**/ դրամ,

բ/ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **10001/տասը հազար մեկ** / դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **13001/տասներեք հազար մեկ** /դրամ

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **20001/քսան հազար մեկ**/ դրամ

ե/ 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **25001/ քսանհինգ հազար մեկ**/ դրամ

զ/ 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝**45001/ քառասունհինգ հազար մեկ**/ դրամ

9. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

10. համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1/ առևտրի օբյեկտների համար՝ **25000/քսանհինգ հազար**/ դրամ,

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **50000/ հիսուն հազար**/ դրամ,

3/ բաղնիքների (սաունաների) համար՝**200000/ երկու հարյուր հազար**/ դրամ,

4/ խաղատների համար՝**500000/ հինգ հարյուր հազար**/ դրամ,

5/ շահումով խաղերի համար՝ **250000/երկու հարյուր հիսուն հազար**/ դրամ,

6/ վիճակախաղերի համար՝ **100000/հարյուր հազար**/ դրամ.

11. համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1/ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **500/հինգ հարյուր**/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝**5001/ հինգ հազար մեկ**/ դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **10001/տասը հազար մեկ**/ դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝**15001/ տասնհինգ հազար մեկ**/ դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **20001/քսան հազար մեկ** /դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **30001/երեսուն հազար մեկ** /դրամ.

2/ ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **300/երեք հարյուր**/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝**1001/ հազար մեկ**/ դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝**2001/ երկու հազար մեկ**/ դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝**4001/ չորս հազար մեկ/** դրամ,

ե 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝**8001/ ութ հազար մեկ/** դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **15001/տասնհինգ հազար մեկ/** դրամ.

12. ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

1/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝**2000/ երկու հազար/** դրամ,

2/ թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **3500/երեք հազար հինգ հարյուր** /դրամ,

3/. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

4/ այլ արտաքին գովազդի համար՝**1500/ հազար հինգ հարյուր/** դրամ,

5/ դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

6/ եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

13. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **100000/հարյուր հազար/** դրամ.

14. համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **10000/տասը հազար** /դրամ.

15. համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝**500000/ հինգ հարյուր հազար/** դրամ.

16. համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1/ 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

2/ 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

3/ 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

4/ 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերը

1. համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝**1000/ մեկ հազար /դրամ**

2. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **1000/մեկ հազար/** դրամ

3. ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **2500/երկու հազար հինգ հարյուր/** դրամ

4. համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **1000/մեկ հազար/** դրամ

5. համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

մրցույթի մասնակցության համար՝ **500/հինգ հարյուր** / դրամ

աճուրդի մասնակցության համար՝ **5000/ հինգ հազար/** դրամ

6. համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. **1000/մեկ հազար/** դրամ

7. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է.

1/կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և/կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ՝ ամսական ՝**50 / հիսուն/** դրամ

բ.ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի ՝մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝**5/ հինգ/** դրամ

8. իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճարը սահմանվում է .

1/ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար

ա.ըստ ծավալի՝մեկ խորանարդ մետր աղբի համար՝**1000/մեկ հազար** / դրամ

բ.ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ **5000/ հինգ հազար** / դրամ

9. կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի. **1000/մեկ հազար** դրամ

10. ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի՝ **500/հինգ հարյուր/ դրամ**

11. ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի՝**500/հինգ հարյուր/ դրամ**

12. համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ **500/հինգ հարյուր/ դրամ**

13. համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ ամսական **4000/չորս հազար/** դրամ

14. համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **2000/երկու հազար/** դրամ

15. համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **5000/հինգ հազար/** դրամ

16. համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **1000/ մեկ հազար/** դրամ

17. համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար տեղական վճարը սահմանվում է.

*1/ յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝**100 (հարյուր) դրամ,***
*2/ յուրաքանչյուր մեկ օրվա համար՝**1000 (հազար) դրամ,***
*3/ մեկ շաբաթվա համար՝ **2000(երկու հազար) դրամ,***
*4/ մեկ ամսվա համար՝ **10000 (տաս հազար) դրամ,***
*5/մեկ տարվա համար՝ **40000 (քառասուն հազար) դրամ:***

18. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 500/հինգ հարյուր / դրամ փոխհատուցման վճար:

Սառնաղբյուր համայնքի ղեկավար՝ Ս.Մադաթյան